Ջրի տաքութիւնը շատ է բարձր, հասնում է մինչեւ 204 աստիճան ըստ Ֆարենհեյտի:

Բամբուկի խողովակներով նա վազում է դէպի լողարանը, ուր եւրոպացիների համար վաննաներ են շինուած:

Իսկ իրանք ճապոնացիք լւացւում են մի ուրիշ առանձին շէնքի մէջ, որի պատերը այնքան մեծ ճեղքեր ունեն, որ փողոցից ազատ կերպով կարելի է տեսնել հոսող ջուրը եւ միասին լողացող կանանց ու տղամարդկանց խումբը:

Արդէն յիշեցի, որ ճապոնացիք մեզանից բոլորովին տարբեր գաղափար ունեն բարոյականութեան մասին եւ բնաւ չեն ամաչում իրանց մերկութիւնից: Բայց այդ ոչ մի տեղ այնքան աչքի չէր ընկնում, ինչպէս Ունզէնում: Գիւղում շատ եւ շատ յաճախ կարելի է պատահել բոլորովին մերկ մարդկանց, որոնք լողանալուց յետոյ հանգիստ ու խաղաղ տկլոր վերադառնում են տուն, ճամփին կանգ են առնում մի ծանօթի պատահելիս եւ խօսում են կատարեալ պարզութեամբ ու այնպէս բնական կերպով, կարծես դա իրանց մշտական ու սովորական վիճակը լինէր:

⁂

Հրաբուղխային այդ ջերմուկները բնականաբար ազդել են ժողովրդի երեւակայութեան վրա, եւ գուցէ դա է պատճառը, որ Ունզէնն ու իր շրջակայքը դարձել են բազմաթիւ աստուածների բնակավայր:

Ամեն քայլիդ մի աստծու կը հանդիպես կա՛մ բազմած մի բլրակի գլխին, կամ քաշւած ձորի մի անկիւնը՝ ցայտող ջերմուկի կողքին:

Քիչ այն կողմ աստուածների ամբողջ մի ատեան է, որ